

ԱՇՈՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԱՆԿԱԽ ԱՆԴԱՄ



Աշոտ Ռաֆայելի Կարապետյանը ծնվել է 1974 թվականի փետրվարի 5-ին Երևան քաղաքում: Հայաստանի և Կանադայի քաղաքացի է:

Ավարտել է Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության ֆակուլտետը, այնուհետև՝ Իլինոյսի համալսարանը (Ուրբանա-Շամպեյն)՝ ստանալով տնտեսագիտության մագիստրոսի աստիճան (MSc): Աշոտ Կարապետյանն ունի Լիազորված ֆինանսական վերլուծաբանի (CFA) և Ֆինանսական ռիսկերի կառավարչի (FRM) հավատարմագրեր:

1995-2002 և 2004-2007 թվականներին Աշոտ Կարապետյանն աշխատել է ՀՀ կենտրոնական բանկում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ: Նախ՝ Դրամավարկային քաղաքականության վարչության Մակրոտնտեսական վերլուծությունների բաժնում տնտեսագետ, այնուհետև՝ Դրամավարկային քաղաքականության վարչության Վճարային հաշվեկշռի և փոխարժեքի քաղաքականության բաժնի պետ, որից հետո Ֆինանսական հաստատություններից ստացվող հաշվետվությունների ամփոփման բաժնի պետ և վերջում Կարգավորման վարչության Ֆինանսական հատվածի քաղաքականության զարգացման բաժնի պետ:

Աշոտ Կարապետյանը 2007 թվականից բնակություն է հաստատել Կանադայում և աշխատանքի անցել Կանադայի հիփոթեքային և բնակարանային կորպորացիայում՝ զբաղեցնելով Շուկայի վերլուծաբան/տնտեսագետի, Կապիտալի շուկաների վարչության Արժեթղթավորման քաղաքականության ավագ վերլուծաբանի և Արժեթղթավորման ռիսկերի կառավարման, ռազմավարության և պրոդուկտների ավագ մասնագետի պաշտոնները:

Աշոտ Կարապետյանը Բանկի բաժնետերերի 2022 թվականի ապրիլի 28-ի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ ընտրվել որպես Բանկի խորհրդի անկախ անդամ: